

ՍԱՍՈՒՆ ՄՐԿ.  
ՎԱՐԴԱՆՅԱՆ  
(Գ յարան)

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԿՆԹԱՐԹԻ ՉԱՓ ԵՐԿԱՐ\*

«...Խակ անեղան եթե մնա  
Երկի մեկ խորշն նողակոյտն իմ,  
Եվ միշտակու աղ քառամի  
Ա՞՛մ, այս ատեն ևս կմեռնիմ...»

Մարդը իր կամքով, համառությամբ, հանձնարով ու հնարամտությամբ կարողանում է փոխել գետերի ընթացքը: Անապատները մրգաստաններ դարձնել: Կարող է ծովեր դատարկել: Աստծո մոտ հյուր գնալ: Քարերից անշունչ հրաշքներ կերտել:

Բողոքից պայթյունից կհոգվի: Հողից գիշեալ կքամի ու քարից՝ հաց: Հնադարյան մի պապիրուսի կամ մագաղաթի չնշին պատառիկի համար կդոդողա՝ որդու նման կիայփայի: Համով ասվող մեկ տողից, սրտով երգված մի երգի սիրահարվածի նման կը զմայվի...

Արարիչ է մարդը:

Նաև կքանի արձաններ անձեռակերտ: Կավերի շենքը խաղաղ, ոստաններ մարդաշատ: Մընրակույտերի կվերածի գորեր ձեռագիր, նկարներ կենդանի և ապարանքներ շքեղազարդ: Կապանի մարդուն: Կիւտի երազը պայծառ: Կկեղծի հեքիաթը կյանքի: Ինչը դարերով եղել է սրբություն, մի ակընթարթում ոտնակոխ կանի, կդառձնի փոշի: Կզոկի իր նմանին: Կիլի հողը, տունը հարեւամի: Մի պատառ հացի համար ընկերոջ կոկորդից կրոնի: Շամի համար կծախի սեփական պատիվը, հողը, հայրենիքը, լեզուն: Շապիկի նման կփոխի դավանանքը, սկզբունքը—

\* Մեր ընթերցողներին նճք ներկայացնում Բոգմոր Ճեմարանի ամսավերի հանդիսավորություններից առաջ ինքնագիր-շարադրությունների մրցույթում լավագուն գնահատանքների արժանացած ուսանողական երեք շարադրություններ:

Գազան է մարդը:

Թե ուզենա զվարժնոցներ կերկնի և թե կքանի պալատներ: Թե մանուկների ողջակեանի կանի և թե կծնի լուսագեղ մանկիներ— Կիսագազան, կիսասատված է մարդը:

Հնարավոր կամ անհնարին բաներ չկան մարդու համար—

Ամենակարող է մարդ:

Բայց կա մի թշնամի զորեղ, որի առջև ծովն է իշնում մարդը:

Մահ—

Ամա մարդու հավիտենական, անպարտ թշնամին:

Զենքով, զորությամբ, ինելքով, հանճարով շեն կարող կովել նրա դեմ: Նա ամենազոր է: Ամենակալ: Նա տեր է ու իշխան: Նա կյանք չէ, որ սպանես: Կանաչ չէ, որ տրորես: Ծառ չէ, որ արմատախիլ անես: Լոյս չէ, որ մարես: Խավար չէ, որ լուսով ցրես: Նա ինքը անհունությունն է: Անսահմանությունը, դասարկությունը, անգթությունը, անվախճանը: Նա հենց հասկած արմատն է: Տրորված կանաչը: Կարծրացած խավարը...

Բայց իմ ժողովուրդը չսոսկաց մահվանից:

Գտավ գաղտնիքը նրա դեմ կովելու:

Մահով հաղթեց մաթին: Քրքչաց, ծիծաղեց մահվան աշքերին նայելով: Մահվան հետ թաղվեց, բայց և հունդի պես հարյավ'...

Այդպես և նա՝

Այն պատահեկիկը:

Պարզապես Պետրոս: Աղքատ, կարուտյալ մանուկ: Չը լաւաճներին, հոգսերին՝ բարեկամ: Լացին, հառաջին՝ մտերիմ: Վշտին, տառապանքին՝ ընկեր: Ցավին, միվանդության՝ ծանոթ...:

Ծով կարիքի, ցավի ու անտարբերության հոգեւաշ մշուշի միջից աղաղակեց պատահին մի օր.

— Ո՞հ, կայծ տըվեք ինձ, կայծ տըվեք, ապրիմ...

Բայց մահը չար էր Սադայելի նման, անգույք ու անաստված: Չխճաց: Չնահանջեց: Տղան տասնյոթ-տասնութ գարուն հազիվ էր բոլորել, երբ զգաց մահվան մոտիկությունը.

Ցնցվեց:

Սարսոաց:

Սարսափեց:

Եվ մի օր էլ, երբ Ալգեգիսուն, մենության մեջ շրջում էր, հանկարծ, հանդիպեց մահվան:

— Դու իմն ես,—ասաց մահը ցուրտ քընքանքով ու սաղց ձեռքերով փորձեց գրկել պատահուն:

— Ո՞հ, տվե՛ք հոգվոյս կրակի մի կաթիլ, սիրե՛լ կուզեմ դն, վ'ապրիլ ու ապրիլ, — սըրտապատառ հեծենծաց տղան:

Ծառերն օրորվեցին վշտահար...

\* \* \*

Ի՞նչ անել:  
Մահվան դեմ կովել անհնարին է: Զկա՞ մի ելք, ճանապարհ: Եվ ի՞նչ բան է մահը: Ի՞նչ է կյանքը: Ինչո՞ւ են ծնվում: Ինչո՞ւ են ապրում: Հաստատուն ոչի՞նչ չկա: Անցալոր է ամեն բան: Հնարավոր չէ՝ արդյոք, ապրել այնպես, որ հավիտենականը ակնթարթով չափվի: Որ հավերժի և վայրկանի սահմաները շնչվեն: Որ մահը սուսակի չդառնա: Որ կյանքը հաղթող, հարատևող լինի.

Տղան սկսեց առանձնություն փնտրել:

Մենության մեջ հաճախ խոկում էր անվախմանի, առեղծվածի, անհաղտի լուծման մասին: Պատասխան, պատասխան՝ էր

փնտրում, որ բալասան լինի իր ցաված սրտի համար: Եվ այդ առանձնության մեջ, ցավից ու հառաջանքից, տառապանքից ու ափստանքից, կենասակը տեսիլներից ու հուսաբեկ անզորությունից, սիրո անաղարս անքանքներից ու մանկատենչ խոկումներից, միամիտ, մաքրափրփուր երազներից ու գողտրիկ, անհաս վայելքներից ծնվում էին երգերը, ինչպես գարնաճը ձեծաղիկը կծնվի. ցաված սրտին իրեւ արձագանք՝ աչքից արցունքը կթափվի: Այդ երգերը զարմանալիորեն կենդանի էին, գումեղ, մտերմիկ, շնչող, թրթոռուն: Հառաջող, թախծող: Ծաղկալից, թեթև:

Այդ երգերում շաղ էին եկել բանաստեղծի սրտի պատասխիկները, հոգու բեկորները, արցունքի շիթերը, երազների կտորտանքները, հառաջանքների հնքը, անպատասխան մնացած հարցումները, կասկածներն ու տարակուսանքները, միվանդ մարմնի տաք մըրմունքները...: Այդ ամենի ամբողջությունը կենդանի մի կյանք էր՝ թրթոռուն, իրական:

\* \* \*

Մահվան և կյանքի սահմանները ասես շնչվեցին:

Մահը դադարեց ահաբեկիշ լինելուց: Մահը սուսկաց իր զոթից: Բեռը ծանը էր: Հաղթանակը՝ պարտություն: Հակառակորդը՝ անաշառ: Սիրտը ճմկելու չափ անվնաս, միամիտ, դողդոջուն, ինչպես թևավորը ագռավի ճանկերում: Մահը կծկվեց, սուս ու փոս, կապտեց ու մեռացավ ամորթահար: Եվ պատահին զգաց իր հաղթանակի վիթխարիությունը: Հակառակավ, որ ինքը մահից, մահցումից, մոռացումից կարողացել է իկել իր ոգու, երազների, մեքիաթների, ապրումների, սրտաբեկ թրթունների, հոգսերի, տառապանքների ու տեսիլների ցան ու ցիր բեկորները և հանձնել հավիտենության: Եվ քանի ժամուն է արև՝ բացվում է գարուն: Ապրում են մարդիկ: Սիրում են մարդիկ: Ծնվում են մարդիկ, կարդում են իրեն, հիշում՝ ինքը շնչում է հրանց հետ: Եվ կարող է համարձակ ասել ժամանակին, մահին, մարդուն, Աստծուն ու հավերժին.

— Գիտցե՛ք, որ դեռ կենդանի եմ...:

